Կին և քաղաքականությունը

2010 նոյեմբեր

Ընտրական օրենսգրքում առաջարկվող փոփոխություններով՝ կուսակցական ցուցակի առնվազն 20%-ը պետք է լինեն կանայք...

էջ 3

Փաստաշար

Կանայք իշխանությունում. Հայաստանը՝ 103-րդ տեղում

Միջխորհրդարանական միության վերջին տվյալներով՝ կանանց թիվը աշխարհի միապալատ խորհրդարաններում կազմում է 19,3%: Դրանց խոսնակների 12,5%-ը կանայք են:

Կանանց ներկայացվածությամբ առաջին տեղում առաջվա պես Ռուանդան է՝ 56,3%, նրան հաջորդում են Շվեդիան՝ 45% , ՀԱՀ-ը, Կուբան, Հյուսիսային Եվրոպայի երկրները:

Հայաստանը 103-րդ տեղում է՝ երկրի խորհրդարանում կանայք 9,2% են, Ադրբեջանը՝ 93-րդ՝ 11,4%, Վրաստանը՝ 120-րդ՝ 6,5%:

Այսօր աշխարհում պետությունների ղեկավարների շրջանում 9 կին կա, կառավարությունների ղեկավարների մեջ՝ 11:

Աշխարհի առավել խոշոր 500 ընկերությունների ղեկավարների շարքում 13 կին կա:

Միջխորհրդարանական միության տվյալներով՝ կանայք մեծամասնություն են Ֆինլանդիայի, Նորվեգիայի, Իսպանիայի, Կանաչ հրվանդանի կղզիների և Շվեյցարիայի կառավարություններում:

Գենդերային հավասարությունը՝ ԵԱՀԿ խորհրդաժողովների օրակարգում

2010-ի դեկտեմբերին Աստանայում ԵԱՀԿ գագաթնաժողովի նախաշեմին կազմակերպությունն անցկացնում է երեք ամփոփիչ խորհրդաժողովներ՝ Վարշավայում, Վիեննայում և Աստանայում: Հոկտեմբերին Լեհաստանի մայրաքաղաքում անցկացված ԵԱՀԿ պետություններում ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը նվիրված առաջին խորհրդաժողովի ժամանակ ի թիվս այլ հարցերի քննարկվեցին գենդերային հավասարության հասնելու և հասարակական-քաղաքական կյանքում կանանց մասնակցությունը բարձրացնելու խնդիրները: Այս թեմային էր նվիրված «Գենդերային հավասարակշռությունը՝ պետության լրացուցիչ մրցակցային գերազանցություն»խորհրդակցությունը, «Անհանդուրժողականություն և անխտրականություն» աշխատանքային նիստը, ինչպես նաև մի շարք այլ զուգահեռ միջոցառումներ: Ենթադրվում է, որ 2004 թ. ընդունած Գենդերային հավասարության աջակցման ԵԱՀԿ գործողությունների ծրագրի շրջանակներում անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ քննարկումները կշարունակվեն նաև Աստանայի ԵԱՀԿ գագաթնաժողովում:

Չիլիի նախկին նախագահը կգլխավորի «UN-Women» գործակալությունը

Չիլիի նախկին նախագահ Միշել Բաչելետը նշանակվել է ՄԱԿ-ի նոր՝ գենդերային հավասարության և կանանց դերի ուժեղացման գործակալության ղեկավար, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալի կարգավիճակով: Այսպես կոչված «UN-Women» կանանց միասնական գործակալության ստեղծման մասին որոշումն ընդունվել էր 2010-ի հուլիսին: Այն իր աշխատանքը կսկսի 2011-ի հունվարին:

Միշել Բաչելետը զբաղեցրել է Չիլիի նախագահի պաշտոնը 2006-ից: Չիլիում նախագահն ընտրվում է մեկ անգամ՝ չորս տարի ժամկետով, ու մարտին նրա լիազորություններն ավարտվել են:

...Քննարկել կուսակցական նախընտրական ցուցակներում պարտադիր քվոտայի ներմուծման հարցը՝ նախատեսելով ոչ միայն կին թեկնածուների բարձր տոկոսը (իդեալում՝ 40%-ից ոչ պակաս), այլև թեկնածուների հերթագայության խստիվ պահպանումը: Օրինակ՝ տղամարդ-կին հաջորդականությամբ՝ այսպես կոչված «կայծակի» սկզբունքով:

Ըստ ԵԽԽՎ թիվ 1899 (2010) «Ընտրական համակարգերը որպես քաղաքական կյանքում կանանց ներկայացվածության բարձրացման գործիք» հանձնարարականի

40%-ից ոչ պակաս - այսպիսին պետք է լինի կանանց կամ տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությունը ցանկացած քաղաքական և հասարակական մարմնում: Այս շեմը Եվրոպայի խորհրդի անդամ երկրները, այդ թվում նաև՝ Հայաստանը, պարտավորվել են ապահովել մինչև 2020 թվականը:

Ըստ ԵԽ նախարարների կոմիտեի «Քաղաքական և հասարակական որոշումների ընդունման գործընթացում կանանց ու տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» թիվ 2003(3) հանձնարարականի

Քվոտաները երեկ, այսօր... իսկ վա՞ղը

Պառլամենտարիզմի համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ եթե երկրի օրենսդիր մարմնում կանայք 10%-ից պակաս են, ապա դա դժվարացնում է տարբեր կարգի սոցիալական օրենքների ընդունումը: Իսկ որոշումների ընդունման մշակույթի վրա ներազդելու, քաղաքական խաղի կանոնները փոխելու, քաղաքականությունն ավելի մարդասիրական դարձնելու հնարավորությունն ի հայտ է գալիս միայն այն դեպքում, երբ խորհրդարանի 25-30%-ը կանայք են: Եվրոպական կառույցները նշաձողն ավելի են բարձրացնում՝ խորհուրդ տալով խորհրդարանի ճանապարհը բռնած կուսակցություններին իրենց ցուցակներում ընդգրկել առնվազն 40% կանայք, ընդ որում՝ «կայծակի» սկզբունքով, այսինքն՝ հերթագայելով տղամարդկանց ու կանանց թեկնածությունները: Արդարության և ներդաշնակության ՄԱԿ-ի չափանիշներով՝ իշխանական կառույցներում սեռերի հարաբերակցությունը պետք է լինի 50/50: Ասել կուզի՝ քաղաքականության մեջ կանանց առաջխաղացման միջոցների, ինչպես նաև ձևակերպումների ընտրությունը բավական լայն է:

Առավել նրբանկատ մոտեցումների շրջանակներում, դրանք նաև կոչում են գենդերային առումով կոռեկտ, հանձնարարվում է, որ նույն սեռի թեկնածուների ներկայացվածությունը չպետք է անցնի 60%-ից: Ի դեպ, նման ձևակերպումը երբեմն օգնում է պահպանելու տղամարդկանց ներկայացվածության հավասարակշռվածությունը: Ասենք՝ Դանիայի սոցիալիստական ժողովրդական կուսակցությունում, որի շարքերում բավականին մեծ թվով ակտիվ կանայք դուրս են մղում տղամարդկանց ղեկավար մարմիններից, կոռեկտ ձևակերպված գենդերային քվոտաները թույլ չեն տալիս այս միտումին ընդարձակվել:

Մեր քաղաքական այրերին իրադարձությունների նման շրջադարձը չի սպառնում, սակայն անակնկալներից ապահովագրվելու ձգտումը այնուամենայնիվ առկա է՝ չէ՞ որ կանայք կարող են անկառավարելի դառնալ: Ուստի ամեն անգամ ընտրությունների նախաշեմին սկսվում է կանանց համար քվոտաների օպտիմալ, հասկացիր՝ տղամարդկանց համար անվտանգ, չափի սակարկությունը:

Այս առումով արժի հիշել, որ միայն քվոտաների օգնությամբ մեզ հաջողվեց տեղափոխվել խորհրդարանում կանանց բացառապես ցածր ներկայացվածությամբ (0-5%) երկրների վերջին տասնյակից մեկ այլ՝ տղամարդկանց բացարձակ գերակայությամբ խումբ (5-9,9% կին պատգամավորներ): Նման երկրները, Միջխորհրդարանական միության տվյալներով, շուրջ երեք տասնյակ են: Զերծ մնալով թվարկումից՝ նշենք միայն, որ այս հանգամանքը զրկում է մեր որոշ քաղաքական գործիչներին կուրծք ծեծել՝ պնդելով, որ «Մենք Աֆրիկա չենք»:

Ինչպես ցույց տվեցին մեր զրույցները խորհրդարանական խմբակցությունների ներկայացուցիչների հետ, այսօր Ազգային ժողովում փոխհամաձայնություն է նշմարվել կանանց ներկայացվածության քվոտան մինչև 20% բարձրացնելու մասին: Դրա դեմ արդարացիորեն առարկում են կանանց կազմակերպությունները՝ պնդելով, որ թիվն օդից է վերցված և չի համապատասխանում միջազգային չափորոշիչներից ոչ մեկին, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերով Հայաստանի ստանձնած պարտավորություններին: Կանանց ՀԿ-ները պնդում են 30%՝ առաջարկելով գենդերային առումով կոռեկտ ձևակերպում՝ կուսակցությունների նախընտրական ցուցակնե-րում նույն սեռի անձանց թիվը չպետք է գերազանցի 70%-ը: Դրան համապատասխան բաշխման սկզբունքն էլ պետք է լինի «առնվազն յուրաքանչյուր երրորդը ցուցակում այլ սեռի ներկայացուցիչ»:

Նման կտրուկ քայլերի քաղաքական ուժերը ակնհայտորեն պատրաստ չեն, ուստի բաշխման սկզբունքի հարցում բացարձակ տարակարծություն է տիրում: Պատգամավորների մեծ մասը ուզում է պահպանել անակնկալներ չպարունակող «առնվազն յուրաքանչյուր տասներորդը կին» ձևակերպումը: Կին առաջնորդների ֆորումը, որի կազմում շատ են կուսակցություններից կանայք, համաձայն է «յուրաքանչյուր յոթերորդը» մոտեցմանը: Հանրային խորհրդի գենդերային հիմնախնդիրների հանձնաժողովը կոչ է անում գործել տրամաբանության շրջանակներում, ըստ որի՝ 20%-ը այլ կերպ, քան «յուրաքանչյուր հինգերորդը» սկզբունքով, չի բաշխվի: Իհարկե, հույս կա, որ վեճի մեջ կծնվի ճշմարտությունը, սակայն «արևի տակ իրենց տեղի» համար պայքարողները դժվար թե տրամաբանությամբ առաջնորդվեն:

Այս ամենի մեջ միայն մեկ դրական հանգամանք է նկատվում. անկախ քվոտավորմանը անձնական վերաբերմունքից հիմնական վեճը քվոտաներին «կողմ» կամ «դեմ» դիրքորոշման շուրջ չէ: Կարծիքների բազմազանությունը տեղավորվում է երկու այլ բանաձևերում: Առաջին. կանանց պետք է առաջ մղել, բայց ոչ միանգամից, այլ աստիճանաբար, որպեսզի մեր ժողովրդավար այրերը ժամանակ ունենան համակերպվելու ավելի մեծ թվով կին պատգամավորների ներկայության հետ: Երկրորդ բանաձևը, որով զինվել են քաղաքական վերնախավի ներկայացուցիչները, «Լավ է քիչ, բայց լավ»-ն է: Նկատի ունեն, որ կուսակցությունները չեն կարողանա ապահովել քվոտավորված կին թեկնածուների արժանի որակ: Ու սա այն դեպքում, երբ բարձրագույն կրթությամբ կանանց տոկոսը մեր երկրում գերազանցում է տղամարդկանց, ու կարելի է չկասկածել, որ նրանց թվում քիչ չեն խելացի և ակտիվ կանայք, ովքեր ունակ են հաջողությամբ աշխատելու խորհրդարանում: Իսկ եթե նման կանայք չկան կուսակցություններում, ապա դա կուսակցությունների խնդիրն է: Այս առումով գուցե քվոտաները ստիպեն կուսակցություններին մտահոգվել որակյալ կադրերի նախապատրաստման խնդրով: Բացի այդ, «Լավ է քիչ, բայց լավ» սկզբունքը հավասարապես վերաբերում է նաև տղամարդկանց, որոնց թիվը քաղաքականությունում ոչ մի կերպ որակ չի դառնում...

Ուշադրություն, մրցույթ

«Նա/Նե»-2010

BRITISH COUNCIL

OSCE

UNFPA

Բրիտանական խորհուրդը, Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանությունը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակը և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը հայտարարում են «Նա/Նե» լրագրողական աշխատանքների ամենամյա մրցույթ:

Հայտերն ընդունվում են մինչև 2010 թ. դեկտեմբերի 31-ը: Մրցույթի արդյունքները կամփոփվեն 2011 թ. հունվարի վերջին՝ Նա/Նե մրցանակի հանձնման ամենամյա արարողության ժամանակ:

Մանրամասները՝ **http://www.btitishcouncil.am կայքում:**

Տեղեկությունների համար դիմել՝ 569923, ներքին համար՝ 115, Արևիկ Բաղալյանին:

Բաց մի՛ թողեք «Նա/Նե»-ի հյուրը, մասնակիցը և հովանավորը դառնալու ձեր հնարավորությունը:

Փաստարկ

«Թեև քաղաքական կամքի շնորհիվ նոր խորհրդարանում կանանց ներկայացվածությունը փոքր-ինչ լավացել է, Ընտրական օրենսգրքով սահմանված 15%-անոց քվոտան բավարար արդյունավետ չէ, քանի որ այն չի բերում խորհրդարանում կանանց թվի իրական ավելացման»:

Կլաուդիա Վոլմեր, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի մոնիթորինգային առաքելության գենդերային հարցերով փորձագետ, 2007 թ. խորհրդարանական ընտրություններ

«Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանն արագացնել ընտրական օրենսգրքի փոփոխության գործընթացը՝ 15%-ի քվոտան բարձրացնելու և այն առաջարկվող ավելի քան 20%-ի մակարդակի հասցնելու հնարավորության քննարկման նպատակով»:

Հայաստանի պարբերական զեկույցի (2009 թ. փետրվար) առնչությամբ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումներից

«Կանանց տեսակարար կշիռը Աժ պատգամավորների, նախարարների, մարզպետների, փոխնախարարների ընդհանուր թվաքանակում, ըստ Հայաստանի կառավարության կողմից նախանշված թիրախային ցուցանիշի, պետք է միչև 2015 թ. առնվազն 25% լինի, սակայն 2010-ին այս ցուցանիշը գնահատվում էր միայն 7%-ի չափով:

Հետևաբար, ընտրական օրենսգրքով քաղաքական կուսակցությունների ընտրացուցակներում կանանց ընդգրկումը սահմանող 15%-ից ոչ պակաս քվոտաները չեն կարող բավարար գործոն լինել վերը նշված մարմիններում կանանց ներկայացվածության 25%-ն ապահովելու համար»:

Հայաստան. ՀՀՆ-ների առաջընթացի ազգային զեկույցից, 2010

Փորձագետի կարծիք

«Իրականում առաջինն ընկրում է ոչ թե ժողովուրդը, այլ...»

«ՄԱԿ-ի 192 անդամ երկրների ավելի քան կեսում այս կամ այն ձևով կիրառվում է քվոտաների համակարգը, իսկ այն երկրները, որոնց խորհրդարաններում կանանց ներկայացվածությունը գերազանցում է 30%-ը, հասել են դրան միայն քվոտաների շնորհիվ: Համաշխարհային փորձն ապացուցում է, որ առանց հատուկ միջոցների անհնար է հաղթահարել գերարգելքները, որոնք խոչընդոտում են կանանց մուտքը դեպի քաղաքականություն»,- ասում է իմ զրուցակից, քաղաքագիտության դոկտոր, ՌԳԱ ԱՄՆ և Կանադայի ինստիտուտի առաջատար գիտաշխատող և գենդերային հարցերի հայտնի փորձագետ Նադեժդա Շվեդովան: Ի դեպ, նրա հայտնի մենագրությունը՝ «Քվոտաներ. բարի՞ք, թե՞ նոր հիմնախնդիրներ», փաստարկների անգնահատելի սկզբնաղբյուր է քվոտավորման դրական ու բացասական կողմերի մասին բանավիճող կողմերի համար: Հետևապես իմ առաջին հարցն այն մասին է, թե ինչո՞ւ են կանանց համար քվոտաների հիշատակումները հաճախ բացասական արձագանքի արժանանում:

- Պատճառները մի քանիսն են: Նախ՝ մեր պատմական ժառանգությունը՝ խորհրդային շրջանում գոյություն ունեցող քվոտավորման համակարգի մասին հիշողությունները: Երկրորդը՝ շատերը համարում են քվոտավորումը ոչ ժողովրդավարական միջոց. սեռի հատկանիշով ընտրելը նրանց կարծիքով ժողովրդավար չէ: Ըստ էության այս բոլոր փաստարկները խորամանկության տարրեր են պարունակում:

Հատկապես քննադատության չի դիմանում ժողովրդավարության ու քվոտավորման անհամատեղելիության մասին փաստարկը: Դատեք ինքներդ: Ինչպե՞ս և ո՞ւմ կողմից է իրականացվում թեկնածուների սկզբնական ընտրությունն ու առաջադրումը: Կարծում եմ՝ չեք վիճի, որ իրականում առաջինն ընտրում է ոչ թե ժողովուրդը, որին հետո են տալիս քվեարկելու, այլ «կուսակցական մեքենաները»: Իսկ եթե հաշվի առնենք, որ կուսակցական մեքենաները թե՛ այսօր և թե՛ անցյալում գրեթե միշտ կազմված էին տղամարդկանցից, դժվար չէ կռահել, թե որքան դժվար է դառնում կանանց առաջխաղացումը իրենց իսկ կուսակցություններում: Ոչ ժողովրդավարական մոտեցումը ամրագրվում է հենց այս մակարդակում, երբ ընտրողների դատին են հանձնվում ցուցակներ, որոնցում գերազանցապես ընդգրկված են տղամարդ թեկնածուների անուններ: Ակնհայտ է, որ հենց նման գործելաոճն է հակասում ներկայացուցչական ժողովրդավարության էությանը, և այս տեսանկյունից քվոտաները մի գործիք են, որոնք թույլ չեն տալիս ժողովրդի կամքի արտահայտման սահմանափակում:

Քվոտաներին դեմ արտահայտվողները հաճախ հաշվի չեն առնում, որ Խորհրդային Միությունում գոյություն ունեցող և այսօր աշխարհում գործող քվոտավորման համակարգը ըստ էության տարբեր բաներ են: Ըստ ժամանակակից մոտեցումների խոսքը ոչ թե կանանց, այլ գենդերային քվոտաների անհրաժեշտության մասին է: Համաձայնեք, եթե որևէ կուսակցություն հավակնում է իշխանության ողջ ժողովրդի անունից, ապա նա պարզապես պարտավոր է արտացոլել իր ընտրական ցուցակներում տվյալ հասարակության մեջ սեռերի հարաբերակցությունը՝ ապահովելով թե՛ հարկատու կանանց և թե՛ հարկատու տղամարդկանց ներկայացուցչությունը:

Մյուս կողմից՝ քվոտավորումը կանանց քանակական առաջընթացի գործիք է: Սա հարկադրական և ժամանակավոր միջոց է, այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացել «գերխոչընդոտները»՝ դեպի քաղաքականություն կանանց ճանապարհին: Կարծում եմ՝ կարիք չկա լրացուցիչ բացատրելու, թե ինչո՛ւ կանայք պետք է լինեն քաղաքական որոշումների ընդունման մակարդակում. դա թելադրված է ոչ միայն արդարության ձգտումով, այլև տարբեր շահերի ներկայացվածության անհրաժեշտությամբ: Քվոտավորման համակարգի նպատակն է, որ կանայք, որպես հասարակության ոչ լիարժեք ներկայացված մաս (իսկ նրանք կազմում են աշխարհի երկրների մեծ մասում բնակչության կեսից ոչ պակասը), ընդամենը կարողանան զբաղեցնել երկրի խորհրդարանում տեղերի «կրիտիկական փոքրամասնությունը» (30-40%):

- Դուք խոսեցիք դեպի քաղաքականություն կանանց քանակական առաջընթացի մասին, որն ապահովում են քվոտաները: Իսկ որակականի մասին ի՞նչ կասեք:

- Չպետք է մտածել, որ քվոտաները ներմուծեցին, և ամեն ինչ հրաշալի կլինի: Ցանկացած երևույթ ունի իր դրական ու բացասական կողմերը, ու դրանք պետք է իմանալ՝ հետագա քայլերը ճիշտ հաշվարկելու համար: Իզուր չեն ասում, որ «քվոտաները երկսայր սուր են»: Մի կողմից՝ նրանք պարտավորեցնում են տղամարդկանց մտահոգվել քաղաքականության մեջ կանանց ներգրավելու խնդրով և ստեղծել կանանց համար այդ հնարավորությունները, մյուս կողմից՝ այդ նույն տղամարդիկ անշուշտ կնախընտրեն առաջ քաշել այնպիսի կանանց, որոնք կլինեն հեշտ կառավարվող և որոնք հանգիստ կընդունեն տղամարդկանց գերիշխանությունը:

Ցավոք, ճշմարիտ է, որ հաճախ քվոտաների քողի տակ կարող են առաջադրել նույնիսկ սիրուհիներին, սեփական կանանց և այլ հարազատների:

Այո՛, դա կարող է լինել սկզբնական շրջանում, սակայն հաջորդ փուլում, երբ օրենսդիր մարմնում կհայտնվեն մեծ թվով կանայք, նրանց մեջ գործընկերության զգացում կառաջանա, ուժ և հավատ, որ կանայք միասին կարող են արմատապես փոխել երկրի ճակատագիրը: Համաշխարհային փորձն ապացուցում է, որ երբ խորհրդարաններում ավելի քան 30 տոկոսը կանայք են, պետությունն սկսում է ակտիվորեն ընդունել սոցիալական ծրագրեր: Իսկ այնտեղ, որտեղ կանայք փոքրամասնություն են, դա չի դիտվում: Սակայն ամենագլխավորն այն է, որ իրոք սոցիալապես բարեկեցիկ են միայն այն երկրները, որտեղ գոյություն ունի գենդերային հավասարության քաղաքականություն: Դա նախևառաջ Հյուսիսային Եվրոպայի երկրներն են, և սա անվիճելի փաստ է:

Բացի այդ, քվոտավորման համակարգը ստիպում է կուսակցություններին մտահոգվել կանանց կադրերի խնդրով: Քվոտաները օբյեկտիվորեն խթանում են կուսակցություններին պատրաստել, աճեցնել կին ակտիվիստներին խորհրդարանում աշխատելու համար, այլ ոչ միայն օգտագործել նրանց ներուժը՝ տղամարդ թեկնածուների ընտրարշավները «սպասարկելու» համար: Ահա թե ինչու կարևոր է ինստիտուտացնել քվոտաները, այսինքն՝ դրանք դարձնել պարտադիր, սահմանել այն նշաձողը, որին կուսակցությունները պետք է համապատասխանեն: Ի դեպ, վերջերս ՄԱԿ-ի կանանց դրության հանձնաժողովում նորից բարձրաձայնվեց տարբեր մակարդակներում 40/60 նշաձողը: Այսինքն՝ տղամարդիկ 60%-ից ավելի չպետք է լինեն: Իսկ երբ հասարակությանը անհավասարակշռություն է պարտադրվում, ստացվում է կաղ ձի:

- Իսկ որքա՞ն կարող է տևել առաջին փուլը, մինչև հաջողվի անցնել հաջորդ որակական մակարդակ:

- Դա միայն ձեզնից է կախված: Այս հարցում խիստ կարևոր է քաղաքական կամքը: Բացի այդ, քվոտավորման համակարգն առավել արդյունավետ է գործում միայն այնտեղ, որտեղ գոյություն ունի կանանց հասարակության ակտիվ դիրքորոշում, այսինքն՝ ակտիվ կանանց շարժում: Ես շարունակ կրկնում եմ, որ եթե առկա է կանանց նկատմամբ խտրականություն, դա ամենևին էլ չի նշանակում, իբր տղամարդիկ հրաշալի են ապրում: Տղամարդիկ չեն մեղավորը, այլ այն ստորադասության համակարգը, որն ստեղծվել է տղամարդկանց մեծ մասի կողմից: Այս իմաստով խիստ կարևոր է կանանց շարժման առկայությունը, որը գիտակցում և բացատրում է, որ ինչպես ընտանիքում, այնպես էլ պետության դեպքում բարեկեցություն և ներդաշնակություն հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կա սեր և միություն: Ստրկատերը չի կարող ազատ լինել, ճիշտ այնպես, ինչպես չի կարող ազատ լինել ստրուկը կամ ստրկուհին: Մենք խոսում են երկխոսության, փոխադարձ հարգանքի մասին, խոսում ենք այն մասին, որ թե՛ տղամարդը և թե՛ կինը ինքնարտահայտման, ստեղծագործական ներուժի զարգացման իրավունք ունի:

Այո՛, քվոտաները հնարավորություն են տալիս քանակապես ավելացնել կանանց թիվը խորհրդարանում, սակայն դրանք համադարման չեն: Մենք երբեք չենք հասնի գենդերային հավասարության ու ներդաշնակության, եթե դրանով զբաղվեն միայն կանայք: Այո՛, նրանք նախնական փուլում ստիպված են դրանով զբաղվել, քանի որ նրանց նկատմամբ խտրականությունն ավելի ուժեղ է: Սակայն գենդերային հիմնախնդիրները ազգային անվտանգության և ողջ երկրի բարգավաճման հիմնախնդիրներ են: Սա պետք է հասկանալ:

Զրույցը վարեց Թամարա Հովնաթանյանը

> «...Միամտություն կլիներ կարծել, որ ցանկացած կին քաղաքական գործիչ ի սկզբանե «ավելի լավն» է ցանկացած տղամարդ քաղաքական գործչից: Իհարկե, սա անհեթեթություն է: Կարևոր չափանիշը պրոֆեսիոնալիզմն է: Սակայն նույնպիսի անհեթեթություն է նաև այն, որ կանայք ի սկզբանե դուրս են մղված քաղաքականությունից այն հիմնավորմամբ, որ կին են, քանի որ նրանք «ի ծնե» պիտանի չեն դրա համար:

> «...Եթե կինն իր բարոյական պարտքն է համարում հասարակական իդեալին ծառայելը ու օժտված է համապատասխան գիտելիքներով, քաղաքական հոտառությամբ ու փորձով, ապա նա պետք է լինի իշխանության մեջ՝ ձգտելով ոչ թե հարմարվել թելադրվող խաղի կանոններին, այլ դրանք հարմարեցնել իրեն: Դրան երբեք միայնակ չես հասնի. ուստի կին առաջնորդները պետք է կարողանան հաղթահարել իրենց մեջ «հարեմի առաջին կնոջ» բարդույթը տղամարդկանց իշխանական էշելոններում:

Բլից հարցում

Քանի՞ կին պետք է լինի խորհրդարանում եւ ինչո՞ւ

Անի Առուստամյան, բուժքույր. «Խորհրդարանում պետք է լինի 30-40%-ից ոչ պակաս կին, քանի որ կանայք ու տղամարդիկ տարբեր կերպ են պատկերացնում նույն հիմնախնդիրները: Ու ընդհանրապես, հավասարակշռությունը միշտ դրական արդյունք է տալիս»:

Գևորգ Բաբախանյան (Դար), նկարիչ. «Իմ կարծիքով՝ կնոջ բնազդն ու հեռատեսությունը կարող են մեծ օգուտ տալ քաղաքականությանը, իսկ քվոտաները, կարծում եմ, 15%-ը բավական է»:

Արմինե Օհանյան, «Հրապարակ» օրաթերթի գլխավոր խմբագիր. «Քվոտաներն անկասկած օգնում են կանանց առաջխաղացմանը, ու լավ կլինի դրանք ավելացնել, քանի որ կանայք անհրաժեշտ են քաղաքականությանը, նրանք ավելի ճկուն են, արագ են լուծումներ գտնում, շանթարգել են լարված իրավիճակում: Մյուս կողմից՝ կանանց քվոտավորումը նվաստացուցիչ է, որովհետև մարդը մարդ է, անկախ սեռից»:

Արտեմ Սարգսյան, վարորդ. «Չեմ հասկանում, թե կանանց ինչի՞ն է պետք Ազգային ժողովը, ավելորդ գլխացավանք ա, թող իրենց կանացի խնդիրներով զբաղվեն»:

Արփինե Գալֆայան, Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտի նախագահ. «Հայաստանում կանայք կազմում են բնակչության կեսը և նույնիսկ ավելին, և արդար ներկայացվածության համար ես կառաջարկեի 50/50 քվոտա: Բացի այդ, նախընտրական ցուցակներում պետք է կիրառել այսպես կոչված «զեբրի» սկզբունքը, այսինքն՝ յուրաքանչյուր երկրորդը պետք է կին լինի, ու այդ ժամանակ կանայք իրոք կմտնեն խորհրդարան»:

Ժաննա Մայիլյան, տնային տնտեսուհի. «Կանանց համար շատ դժվար է խորհրդարանում աշխատել, մենք բոլորս տեսնում ենք, թե ինչ կոպիտ են մեր տղամարդ պատգամավորները, ու նրանց հետ ընդհանուր լեզու գտնելու համար պետք է տղամարդ լինել: Կարծում եմ՝ կանայք չպետք է խառնվեն նրանց վեճերին՝ նրանց չնմանվելու համար, դրա համար էլ չեմ ուզում, որ ավելի շատ կանայք ընտրվեն»:

Ռուբեն Բաբայան, տիկնիկային թատրոնի տնօրեն. «Իհարկե, որքան շատ կանայք լինեն, այնքան լավ, պետք է ապահովել հավասարակշռություն, սակայն ես խորհուրդ կտայի մտածել նաև որակի մասին: Այնուամենայնիվ, ընդունակ կանայք մեզանում ակներևաբար 15 տոկոսից ավելի են»:

Աշոտ Ալեքսանյան, քաղաքագիտության թեկնածու, դոցենտ. «Կան հազարավոր հասարակական կազմակերպություններ, որոնցում կանայք ակտիվ են, ու ես պատճառ չեմ տեսնում, թե ինչու նրանք չպետք է նույնքան ակտիվ լինեն խորհրդարանում: Ազգային ժողովում կանանց թվի ավելացումը մինչև 50% կնպաստի սոցիալական ոլորտում, աշխատանքի և կանանց իրավունքների հարցերում բարելավումներին»:

Լուսինե Հարությունյան, ԵՊՀ ուսանողուհի. «Եթե պետք է քվոտաներ մտցնել, ապա միայն 50/50, հակառակ դեպքում ստացվում է գենդերային անհավասարություն: Սակայն թիվը կարևոր չէ. եթե կինը խելացի է, նա իրեն կդրսևորի, այլապես տոկոս լրացնելու համար ինչ կին ասես չի կարող հայտնվել խորհրդարանում»:

Զրուցեց Արման Ղարիբյանը

Ձայն բազմաց

Ինչպե՞ս եք վերաբերվում կանանց համար քվոտաներին:

Սոցիոլոգիական հարցման 1300 մասնակիցների ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Դրական - 43%
Բացասական - 13,5%
Չգիտեմ - 43,5%

Քվոտաներին դրական վերաբերվողների գերակշիռ մասը (75,3%) համարում է, որ քվոտաների օպտիմալ չափը 20%-ից բարձր է՝ մինչև 50%: Գործող 15% քվոտային համաձայն էր հարցվածների միայն 8%-ը, 17%-ը կարծում է, որ այն պետք է բարձրացնել մինչև 20%:

Հարցվածների 53,4%-ը կանանց համար քվոտաների անհրաժեշտություն է տեսնում ոչ միայն օրենսդիր մարմնում, այլ նաև գործադիր իշխանությունում:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի 2008-ին Հայաստանի բոլոր մարզերում անցկացրած հարցման արդյունքների

Քաղաքական խոհանոց

Մի «վրիպակի» պատմությունը

Ուշադիր ուսումնասիրելով Ազգային ժողովի կայքում տեղադրված Ընտրական օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների աշխատանքային տարբերակը՝ հայտնաբերեցինք, որ 107-րդ հոդվածի դրույթներից մեկով կուսակցությունների «ընտրական ցուցակի առնվազն 20 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում, ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին»:

Այս դրույթի հետ կապված առնվազն երկու հարց ծագեց: Առաջին՝ ինչո՞ւ հենց 20%, այլ ոչ, դիցուք, 40%, ինչպես խորհուրդ է տալիս ԵԽԽՎ-ն, կամ 30%, ինչպես առաջարկում են կանանց կազմակերպությունները: Էլ չենք խոսում ՄԱԿ-ի 50/50-ի մոտեցման մասին: Եվ երկրորդ՝ ինչո՞վ է բացատրվում «առնվազն յուրաքանչյուր տասներորդը» ձևակերպումը: Մեկնաբանելու խնդրանքով դիմեցինք ԱԺ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Դավիթ Հարությունյանին:**

Նրա առաջին արձագանքը, որքան էլ տարօրինակ է, զարմանքն էր: «Այս ձևակերպումը ամենայն հավանականությամբ վրիպակ է»,- ենթադրեց նա՝ բացատրելով, որ տրամաբանորեն 20%-ի դեպքում խոսքը անշուշտ պետք է գնա «առնվազն յուրաքանչյուր հինգերորդի» մասին: Փորձելով պարզել օրինագծի տեքստում «վրիպակ» սպրդելու ակունքները՝ հանձնաժողովի նախագահը հայտնաբերեց, որ «յուրաքանչյուր տասներորդը» ըստ երևույթին քաղաքական փոխզիջման արդյունք է, որին նա, ի դեպ, չհամաձայնեց: «Կարծում եմ՝ չարժի մանրանալ: Իմ անձնական մոտեցումը՝ «առնվազն յուրաքանչյուր հինգերորդը», ու ես, որպես գլխադասային հանձնաժողովի նախագահ, քննարկումների ժամանակ այն կպաշտպանեմ»,- հավատացրեց նա:

Ինչ վերաբերում է 20%-ին, ապա այս հարցում, նրա կարծիքով, պետք չէ կտրուկ քայլեր անել: «Ես ընդհանրապես դեմ չեմ, որ շատ կանայք լինեն: Ի վերջո, եթե ինչ-որ մեկը պետք է փրկի երկիրը, ապա հավանաբար դրանք կանայք կլինեն: Սակայն եկեք չշտապենք, աստիճանաբար առաջ գնանք: Օրենքի նախորդ խմբագրությունում խոսքը կանանց 15% ներկայացվածության մասին էր, հիմա քայլ առաջ ենք կատարում և առաջարկում ենք 20%, որը, կարծում եմ, կուսակցություններն ի վիճակի են ապահովել»,- ասաց նա:

2012-ին եվրոպական ամենաբարձր չափանիշներով վերանորոգված այս դահլիճում նիստեր կգումարի նոր խորհրդարանը: Իսկ քանի՞ կին կլինի նրա կազմում՝ մեծապես կախված է այն պատգամավորների կամքից, ովքեր այսօր են նստած այս նույն դահլիճում : Ասել է թե՝ գենդերային հավասարակշռության ապահովմանն ուղղված ի՞նչ պահանջներ կառաջադրվեն կուսակցություններին ընտրական օրենսգրքով, որն այսօր հանրային քննարկումների և քաղաքական խորհրդատվությունների փուլում է գտնվում:

Խորհրդարան. սակարկելը տեղին չէ

Էդուարդ Շարմազանով, ՀՀԿ խմբակցություն.
«Ես դեմ եմ անբնական մեթոդներին»

Հարգում և գնահատում եմ քաղաքական կյանքում կանանց դերը, սակայն դեմ եմ ինչ-որ քվոտաների: Սա նույնն է, ինչ պարտադրել, որ համերգի ժամանակ անպայման պետք է երգեն մեկ կին ու մեկ տղամարդ: Քվոտավորումը արհեստական գործընթաց է, իսկ ես իրադարձությունների բնական ընթացքի կողմնակից եմ:

Ինչ վերաբերում է կնոջ դերին, ապա ուզում եմ հիշեցնել Գարեգին Նժդեհի խոսքը, որ «մայրերի ափերում պետք է փնտրել ազգերի ճակատագիրը», իսկ այն ազգերը, ովքեր չեն գիտակցում կնոջ դերը, դատապարտված են...

Հերմինե Նաղդալյան, ՀՀԿ խմբակցություն
«Մենք զուսպ, չափավորված քայլերի կողմնակից ենք»

Ուզում եմ հիշեցնել, որ մինչև ընտրական օրենսգրքի նոր փոփոխությունների հայտնվելը մեր խմբակցության մի քանի պատգամավորներ նախաձեռնությամբ հանդես եկան, որով առաջարկվում էր կուսակցական ցուցակում 15% քվոտան բաշխել հետևյալ սկզբունքով՝ առաջին տասնյակում՝ մեկ կին, իսկ հետո՝ յուրաքանչյուր վեցյակում մեկական: Այս առաջարկությունը համաձայնեցվել էր ՀՀԿ կանանց խորհրդի հետ: Ի դեպ, մեզ հայտնի դարձավ նաև Կին առաջնորդների ֆորումի տեսակետը՝ «յուրաքանչյուր յոթերորդը» սկզբունքի վերաբերյալ:

Կարծում եմ՝ սա այնքան էլ էական չէ՝ յոթերորդը կամ տասներորդը: Պետք է հաշվի առնել, որ այս հարցի հիմքում լուրջ հիմնախնդիր կա, այն է՝ ինչպես ապահովել կուսակցական կանանց առաջխաղացումը ցածր էշելոններից վերին էշելոններ: Չէ՞ որ այսպես կոչված գենդերային բուրգը գոյություն ունի նաև կուսակցությունների ներսում, որոնց ղեկավար կազմում շատ քիչ են կանայք: Մեկ-երկու՝ ոչ ավելի: Իսկ դա նշանակում է, որ մեր կուսակցությունների մեծ մասն այսօր պատրաստ չէ ընդգրկելու կանանց ընտրական ցուցակների առաջին դիրքերում, ու նրանք դժվարություններ կունենան խորհրդարանում աշխատելու ընդունակ կադրեր գտնելու հարցում: Պարտավորեցնելով կուսակցություններին կանանց ներկայացնել ցուցակների առաջին տեղերում՝ մենք նրանց դրդում ենք արհեստական որոշումների, նպաստում անկարող, պատահական, անպատրաստ կանանց առաջմղմանը: Կարծում եմ՝ չարժի կուսակցություններին պարտադրել այդ ճանապարհը. սա կարող է բերել կտրուկ փոփոխությունների նրանց արդեն կայացած ավանգարդ մարմիններում: Կարծում եմ՝ կտրուկ փոփոխությունների գնալով՝ ցանկալի արդյունք չենք ստանա: Ուստի մենք զուսպ, չափավորված քայլերի կողմնակից ենք...

Արծվիկ Մինասյան, ՀՅԴ.
«Սոցիալիստներն ավելին կպահանջեն»

20%-ը որպես միջանկյալ միջոց նորմալ է, սակայն որպես արդյունք՝ բավարար չէ: Սոցիալիստներն ավելին կպահանջեն: Իմ կարծիքով՝ համամասնականով ընտրվող 90 պատգամավորներից յուրաքանչյուր հինգերորդ տեղը կանանց պետք է հատկացվի: Մենք ունենք ընտրական օրենսգրքի առաջարկությունների փաթեթ, այդ թվում նաև՝ գենդերային հավասարակշռության ապահովման առումով: Ի վերջո, գենդերային հավասարության գլխավոր նախապայմանը ոչ միայն իրավունքների ձևական ապահովումն է, այլև դրանց իրականացման համար հնարավորությունների: Ուստի միայն բարի մտադրությունները բավարար չեն, անհրաժեշտ են համապատասխան մեխանիզմներ, ու նախևառաջ՝ խորհրդարանում տեղերի բաշխման առումով: Պետք է խոսել ոչ միայն կանանց 25%-ից ոչ պակաս քվոտավորման մասին, այլև ամրագրել երաշխիքներ, որ այն դեպքում, երբ կինը դուրս է գալիս, նրան փոխարինելու է ցուցակում հաջորդ կինը, այլ ոչ թե տղամարդը: Ու միայն այդ ժամանակ 25%-ն իրապես ներկայացված կլինի խորհրդարանում: Այլապես կունենանք այն, ինչ ունենք, երբ կանայք անհայտ պատճառներով հրաժարվում են մանդատից...

Լիլիթ Գալստյան, ՀՅԴ.
«Մենք պարզապես ստիպված ենք խնդիրը լուծել քվոտաների միջոցով»

Ցանկանում եմ հիշեցնել, որ պետական մակարդակով ենք ստորագրել մի շարք միջազգային կոնվենցիաներ, որոնց էությունը կանանց իրավունքների պաշտպանությունն է և քաղաքական գործընթացներում նրանց մասնակցության ապահովումը:

Սակայն գաղտնիք չէ, որ մեր քաղաքական դաշտում իշխում են բացառապես տղամարդիկ, ովքեր իրականում այնքան էլ չեն ձգտում կանանց առջև բացել մեծ քաղաքականություն տանող դռները: Մենք պարզապես ստիպված ենք կանանց քաղաքական ներկայացվածության հարցը լուծել ընտրական օրենսգրքում քվոտաներ ամրագրելու միջոցով: Թեև իրականում հայ կանայք իրենց ինտելեկտով, կրթությամբ, պատասխանատվությամբ և կազմակերպվածությամբ առանց քվոտաների էլ ունեն իրենց ասելիքը քաղաքականությունում:

Արամ Սաֆարյան, «Բարգավաճ Հայաստան».
«Ես կանանց մասնակցության կողմնակից եմ, սակայն ողջախոհ սահմաններում»

Վերջերս հանդիպելով Կին առաջնորդների ֆորումի ներկայացուցիչների հետ մենք մեր կուսակցության նախագահի անունից հավաստիացրինք, որ կպաշտպանենք նրանց առաջարկությունները: Խոսքը քվոտայի բարձրացման և մանդատից կանանց հրաժարվելու անընդունելիության մասին էր, ինչը, կարծում եմ, պետք է ամրագրել ընտրական օրենսգրքում: Ընդհանրապես, ես կողմ եմ կանանց մասնակցության բարձրացմանը, սակայն ողջախոհ սահմաններում, այսինքն՝ ընտրություն կատարենք առավելագույնի (ինչպես, օրինակ, Հյուսիսային Եվրոպայում, որտեղ խորհրդարանի 30-40%-ը կանայք են) և նվազագույնի (ինչպես Հարավային Եվրոպայում, որտեղ 10-20% է) միջև:

Նաիրա Զոհրաբյան, «Բարգավաճ Հայաստան».
«Արհեստական միջոցների փոխարեն պետք է լիդերներ դաստիարակել»

Ես անկասկած կողմ եմ քաղաքականությունում կանանց ներգրավմանը, սակայն դեմ եմ արհեստական նիշեր սահմանելուն, դեմ եմ քվոտաներին: Ենթադրենք ընտրական օրենսգրքով պարտադրեցինք, որ ցուցակներում պետք է կանանց թիվը կազմի 40 տոկոս, արդյոք դա հակառակ ազդեցություն չի՞ ունենա: Իմ համոզմամբ՝ եթե քաղաքական գործիչը պրոֆեսիոնալ է և իր գործին սրտացավ վերաբերվող անձնավորություն, ապա սեռն այնքան էլ էական չէ: Այլ հարց է, որ պետք է ստեղծել բարենպաստ պայմաններ, փոխել հասարակության մտածելակերպը, որպեսզի կանայք էլ կարողանան առանց խոչընդոտների զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հայաստանում կանանց թիվը հատում է 52 տոկոսի սահմանը, սակայն սոցիարցման ժամանակ «Կուզենայի՞ք վարչապետի կամ նախագահի պաշտոնում կին տեսնել» հարցին հենց կանայք են բացասական պատասխան տալիս: Հետևաբար արհեստական միջոցներ ձեռնարկելու փոխարեն հարկավոր է կին լիդերներ դաստիարակել և աջակցել նրանց:

Լարիսա Ալավերդյան, «Ժառանգություն» խմբակցություն
«Յուրաքանչյուր տասներորդը» սկզբունքով խնդիրները չեն լուծվի»

Համոզված եմ՝ եթե խորհրդարանում կանանց թիվը հասնի կրիտիկական զանգվածի, բազաթիվ սոցիալական և կրթական հիմնախնդիրներ կստանան իրենց լուծումը: Էլ չենք ասում, որ կանանց ներկայությամբ փոխվում են և՛ մթնոլորտը, և՛ միջավայրը: Երևի թե միայն կանայք կկարողանան փոխել մեր քաղաքական մթնոլորտը, որը բիզնեսի, իշխանության և ուժի պայթյունավտանգ խառնուրդ է: Իհարկե, քվոտաներին դիմելը վերջին միջոցն է, սակայն դրան այլընտրանք չկա, ուստի ես կողմ կքվեարկեմ, որ կուսակցական ցուցակներում լինեն 20% կանայք: Ինչ վերաբերում է «յուրաքանչյուր տասներորդը» սկզբունքին, ապա այն չի նպաստի քաղաքականության մեջ կանանց ներգրավմանը, քանի որ առաջին դիրքերում դարձյալ տղամարդիկ կլինեն:

Հեղինե Բիշարյան, «Օրինաց երկիր» խմբակցություն.
«Մենք կանանց կողմ ենք»

Կարծում եմ՝ 20%-ը 15%-ի համեմատությամբ քայլ առաջ է: Ինչ վերաբերում է «յուրաքանչյուր տասներորդը» ձևակերպմանը, ապա օրինագիծը դեռևս քննարկման փուլում է, և առայժմ չարժի այն վերջնական համարել: Մյուս կողմից՝ այս ձևակերպումը նշանակում է, որ քաղաքական թիմերը պետք է մտածեն, թե ինչպես առաջարկվող 20%-ի սահմաններում համաչափ բաշխեն քվոտան: Ստացվում է, որ ոչ պակաս, քան յուրաքանչյուր 7-8-րդ տեղը, այսինքն՝ առաջին քսանյակում պետք է լինի առնվազն երեք կին: Համենայն դեպս, սա քաղաքական կամքի հարց է: Բացի այդ, մենք մտադիր ենք շեշտադրել նաև մեկ այլ պահանջ. եթե ցուցակից ինչ-ինչ պատճառներով կին է դուրս գալիս, ապա նրան պետք է փոխարինի ցուցակի հաջորդ կինը: Այլապես փորձը ցույց է տալիս, որ ի սկզբանե ընտրական ցուցակում 15% կին կա, սակայն նրանց հետո փոխարինում են տղամարդիկ, և արդյունքում մենք կորցնում ենք կանանց համար քվոտան: Ընդ որում, չենք կարող մեղադրել քվոտաները խախտելու համար քաղաքական ուժերին, քանի որ այդ մասին օրենքում ոչինչ չի ասվում: Մենք կառաջարկենք օրենքով ամրագրել համապատասխան դրույթ, և այդ ժամանակ կանանց 20%-անոց ներկայացվածությունը որպես արդյունք կարտացոլվի խորհրդարանում:

Զրուցեցին Հասմիկ Հարությունյանը
Լիա Խոջոյանը

Հետադարձ հայացք

Որքան շատ իշխանություն, այնքան քիչ կանայք

2007-ի խորհրդարանական ընտրություններում մեծամասնական ընտրակարգով (41 մանդատ) ոչ մի կին չընտրվեց: Համամասնական ընտրակարգով (90 մանդատ) խորհրդարանում ընտրված կուսակցությունները օրենքի պահանջներին համապատասխան ընտրական ցուցակներում ապահովել էին 15%-ից ոչ պակաս կանայք՝ առնվազն յուրաքանչյուր տասներորդը սկզբունքով:

Կուսակցական ցուցակներում ներկայացվել էին
ՀՀԿ - 15,3% կին, տեղերը՝ 8, 12, 23, 37, 46...
«Բարգավաճ Հայաստան» - 16% կին, տեղերը՝ 3, 11, 20, 23, 28
«Օրինաց երկիր» - 23,3% կին, տեղերը՝ 3, 19, 30, 33, 37
ՀՅԴ - 25,6% կին, տեղերը՝ 4, 11, 23, 30, 36...
«Ժառանգություն» - 21,5% կին, տեղերը՝ 2, 4, 7, 11, 24...

Արդյունքում՝ գործող խորհրդարանի կազմում ընտրվեց 12 կին, ինչը կազմում է 9,2%:

ԱԺ ներկայիս գումարման խմբակցությունների կազմում
«Ժառանգություն» - 7 պատգամավորից 3 կին (42,8%)
ՀՅԴ - 16 պատգամավորից 3 կին (18,7%)
«Օրինաց երկիր» - 8 պատգամավորից 1 կին (12%)
«Բարգավաճ Հայաստան» -25 պատգամավորից 3 կին (11,5%)
ՀՀԿ - 63 պատգամավորից 2 կին (3,21%)

ԼՈԲԲԻՆԳ

«Ջենտլմեններ կան, տեղեր՝ ոչ»

Կանանց ՀԿ-ները մեկնաբանում են ընտրական օրենսգրքի քվոտաների մասին փոփոխությունները

Ելենա Վարդանյան,
ՀՀ նախագահին կից Հանրային խորհրդի գենդերային հիմնախնդիրների և ժողովրդագրության հանձնաժողովի նախագահ

Նախագծում առաջարկվող «յուրաքանչյուր տասներորդը» սկզբունքը, կարծում եմ, կոռեկտ չէ: Այն չի համապատասխանում նաև տարրական տրամաբանությանը, որովհետև 20%-ը նվազագույնը յուրաքանչյուր հինգերորդը է:

Բացի այդ, անհրաժեշտ է այդ 20%-ն ապահովել ոչ թե կուսակցությունների ընտրական ցուցակներում, այլ ընտրություններից հետո, երբ կատարվում է բաժին ընկած մանդատների կրկնակի բաշխում: Ցավոք, օրենքի նախագիծը չի առաջարկում մեխանիզմներ, որոնք կխոչընդոտեն այս շրջանում կանանց՝ մանդատից հրաժարվելու պրակտիկան:

Առաջարկում ենք քննարկումներ ու լսումներ անցկացնել այս հարցով: Մենք նաև մեր հանձնաժողովի նիստ գումարեցինք, որոշեցինք դիմել կանանց կազմակերպություններին, որպեսզի համատեղ ուժերով հասնենք ցանկալի փոփոխությունների:

Սոֆյա Բաբայան,
Հանրային խորհրդի գենդերային հիմնախնդիրների ենթահանձնաժողովի նախագահ

Ջենտլմենների մասին անեկդոտը ճիշտ մեր քաղաքական դաշտի մասին է. չկա քաղաքական կամք, չկա որոշակի քաղաքական մշակույթ...

Ու թեպետ համաշխարհային պրակտիկայում վաղուց արդեն մշակվել են գենդերային կոռեկտ մոտեցումներ, ասենք, «ընտրական ցուցակի յուրաքանչյուր երկրորդը կամ երրորդը հակառակ սեռի ներկայացուցիչ է», հայրենի կուսակցությունները չեն շտապում դրանք կիրառել:

Մենք պետք է հասարակությանն իրազեկենք, ներկայացնենք միջազգային հաջողված փորձը և հասնենք այն բանին, որ դրանք ներդրվեն մեզանում: Մյուս կողմից՝ ես ցավ եմ զգում այն կանանց համար, որոնք որոշակի դիրքերի հասնելով, հեշտորեն հանձնվում են՝ վանելով իրենցից գենդերային հավասարության հիմնախնդիրը:

Աիդա Թոփուզյան,
Կին ընտրողների լիգայի ղեկավար

Ահա արդեն 17 տարի է՝ խոսում ենք ցուցակների մասին, թվերի և տոկոսների հետ ենք խաղում, բայց քանի որ չկա քաղաքական կամք, ամեն անգամ ընտրություններից հետո նույն կոտրած տաշտակի առաջ ենք կանգնում: Դրա համար էլ կարծում եմ, որ ամենակարևորը քաղաքական կամքն է...

Մեր երկրում անկախության հենց առաջին օրվանից կանայք դրեցին քաղաքացիական հասարակության հիմքերը, պայքարեցին նրա կայացման համար: Այսօր մենք շատ պատրաստված կանայք ունենք, որոնք կարող են քաղաքական ասպարեզում գործել: Կուսակցություններում էլ կանայք ամենաակտիվն են, այլ հարց է, որ նույն այդ կուսակցությունների վերնախավում կանայք սակավաթիվ են:

Ջեմմա Հասրաթյան,
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ

Գենդերային քվոտաները ինքնանպատակ չեն, դրանք երկրի խորհրդարանում երկու սեռերի հավասարակշռված ներկայացվածությունն ապահովելու առավել ընդունված և գործուն մեխանիզմ են: Դեռ 2008-ին մենք խորհրդարանական խմբակցությունների և հանձնաժողովների նախագահներին, ինչպես նաև անձամբ Աժ նախագահ պրն Հ.Աբրահամյանին ուղարկեցինք 23 կանանց կազմակերպությունների դիմում-առաջարկը ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ: Առաջարկել էինք գենդերային առումով կոռեկտ ձևակերպում, այն է՝ կուսակցությունների ընտրական ցուցակներում պետք է ներկայացված լինեն նույն սեռի 70%-ից ոչ ավելի անձինք, ընդ որում՝ կին ու տղամարդ թեկնածուների հաջորդականությունը չպետք է գերազանցի երեք տեղը:

Սակայն ընտրական օրենսգրքի նոր փոփոխություններում մեր առաջարկությունները հաշվի չեն առնվել: Թեև կանանց ներկայացվածությունը բարձրացվել է մինչև 20% (նախկին 15%-ի փոխարեն), սակայն «յուրաքանչյուր տասներորդը» ձևակերպումը մնացել է նույնը, և ակնհայտ է, որ նման առաջարկը դրական փոփոխությունների չի հանգեցնի: Ուստի մենք կշարունակենք պաշտպանել մեր դիրքորոշումը՝ խորհրդարանում երկու սեռերի 70/30 հարաբերակցության մասին՝ միաժամանակ պնդելով ամրագրել օրենքում մեկ այլ դրույթ, որ մանդատից հրաժարվող կին թեկնածուին պետք է փոխարինի նույն սեռի հաջորդ թեկնածուն:

Լիլիթ Ասատրյան,
Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի նախագահ

Մեր հասարակական կազմակերպությունը և «Կին առաջնորդներ ֆորումի» համակարգող խորհուրդը, որի անդամն եմ նաև ես, ակտիվորեն ներգրավված են քվոտաների մասին օրինագծի քննարկման գործընթացում: Իհարկե, գերադասելի կլիներ, որ ընդհանրապես չլինեին քվոտաները, սակայն մենք գիտակցում ենք, որ ներկա իրավիճակում կանանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին կարիք ունի «սատարող» մեխանիզմների: Ու որպեսզի այդ մեխանիզմն արդյունավետ լինի, կարծում ենք, անհրաժեշտ է օրենքում պահանջ ամրագրել, որ կուսակցական ցուցակներում առնվազն յուրաքանչյուր յոթերորդ թեկնածուն պետք է կին լինի: Ինչպես նաև մանդատից կին թեկնածուի հրաժարվելու դեպքում նրան անպատճառ փոխարինի ցուցակով հաջորդող կինը:

Նորա Հակոբյան,
Կանանց հանրապետական խորհրդի նախագահ

Առաջարկվող 20%-անոց քվոտան կարելի էր առաջընթաց համարել, եթե չլիներ «առնվազն յուրաքանչյուր տասներորդը» արտահայտությունը: Ես կասեի՝ բավական «շրջահայաց» մոտեցում է, որպեսզի հանկարծ կանայք մի երկու քայլ առաջ չգնան: Այս իմաստով հարց է ծագում. եթե որևէ կուսակցությունում 70 տոկոսը կանայք են, ապա ինչու տոկոսային այդ հարաբերակցությունը չպահպանել ընտրական ցուցակում:

Երբ նախորդ ընտրություններից հետո այդ հարցը տվեցինք առաջատար կուսակցություններից մեկի լիդերին, որը, ի դեպ, հայտարարում էր, թե իր հաղթանակի համար պարտական է կանանց, նա խիստ զարմացավ. «Տիկի՛ն Նորա, ինչ է, ուզում եք իմ կուսակցությունը քանդե՞լ... Բա տղամարդիկ կիանդուրժե՞ն»: Քանի դեռ մենք այս տրամաբանությամբ ենք առաջնորդվում, առաջընթաց չենք ունենա:

...Կարևորն այն չէ, թե ի՛նչ են մեզ տալիս, այլ այն՝ ի՛նչ ենք մենք ուզում վերցնել: Կանայք հուզվելու և բողոքելու փոխարեն պետք է գործեն, հատկապես կուսակցություններում ընդգրկված կանայք պետք է ակտիվ լինեն, ընդգրկվեն տարբեր հանձնաժողովներում, հավակնեն իրենց կուսակցություններում ղեկավար պաշտոնների:

Այդ դեպքում ընտրությունների ժամանակ նրանց առաջադրվելն առավել բնական կլինի: Առաջարկում եմ, որ բոլոր ակտիվ կանանց ՀԿ-ները և քաղաքական կազմակերպությունները համախմբվեն՝ քվոտաների հարցում միասնական դիրքորոշում մշակելու համար: Իսկ հետո հրապարակեն այն՝ հանդես գալով համատեղ հայտարարությամբ:

Գոհար Շահնազարյան,
Կանանց ռեսուրսային կենտրոնի ղեկավար

Մենք դեմ ենք ընտրական օրենսգրքով առաջարկվող տարբերակին, քանի որ համարում ենք, որ այն էական փոփոխությունների չի բերի: Եվ եթե կանանց կազմակերպությունները միասնական դիրքորոշում որդեգրեն, մենք կմիանանք նրանց:

Զրուցեց Լիլիթ Քոչինյանը

ԿԵՍ-ԿԱՏԱԿ...

«Ավտոբուս մի կին բարձրացավ: Շուրջը նայեց. ազատ տեղեր չկային, բոլոր նստածներն էլ՝ բավական երիտասարդ տղամարդիկ: Մի քանի կանգառ կինը դեռ հույս ուներ, որ գոնե մեկը իր տեղը կզիջի: Ի վերջո, զայրացած բացականչեց. «Բա էս ավտոբուսում մի ջենտլմեն չկա՞»: Ուղևորներից մեկը, առանց տեղից ելնելու, արձագանքեց. «Ջենտլմեններ կան, տեղեր չկան»:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

Հարություն Առաքելյան,
Ռամկավար-ազատական կուսակցություն
«Փոփոխություններ են պետք ոչ թե ընտրական, այլ քրեական օրենսգրքում»

Գործող ընտրական օրենսգիրքն ապահովում է կանանց նվազագույնը 15%-անոց ներկայացվածություն կուսակցական ցուցակներում, նոր փոփոխությունների հեղինակները սիրահոժար հնարավորություն են ընձեռում Հայաստանի կանանց ևս 5%-ին քաղաքականությամբ զբաղվելու: Մեր կուսակցությունում շատ են կանայք, այդ թվում նաև՝ փոխնախագահի պաշտոնում, ինչպես նաև վարչությունում, սակայն մենք դեմ ենք կանանց արհեստական ներգրավմանը քաղաքականությունում: Մեր մոտեցումն է՝ ընդամենը նրանց համար խոչընդոտներ չստեղծել: Կարծում եմ, որ այս բոլոր տոկոսները վիրավորական են կանանց համար: Եվ ընդհանրապես, փոփոխություններ պետք է կատարել ոչ թե ընտրական, այլ քրեական օրենսգրքում, որում պետք է ամրագրել քրեական պատասխանատվություն այն անձանց համար, ովքեր խոչընդոտում են կանանց քաղաքականությամբ զբաղվելու իրավունքը:

Պարույր Հայրիկյան,
Ազգային ինքնորոշում կուսակցություն.
«Կարկատաններով ժողովրդավարություն չես ստեղծի»

Ընտրական օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները ընդամենը հերթական կարկատան են: Ժողովրդավարությունը կարկատաններով չես ստեղծի, ու եթե իրական ժողովրդավարություն լինի, այդժամ սեռերի ժողովրդագրական հարաբերակցությունն ինքն իրեն կարտացոլվի խորհրդարանում: Դրա հետ մեկտեղ պետք է լինի նաև ներկուսակցական ժողովրդավարություն: Օրինակ՝ մեր կուսակցության վարչությունում ընտրվել է 55-60% կին ու աղջիկ և 40% տղամարդ: Սա, իմ կարծիքով, ժողովրդավար գործելաոճ է: Իսկ քվոտաներ սահմանելը հակաժողովրդավար ու հակասահմանադրական է, քանի որ բոլոր մարդիկ հավասար են ու պետք է ընտրվելու հավասար հնարավորություններ ունենան:

Նաիրա Կարապետյան,
Միացյալ ազգային-ազատական կուսակցություն (ՄԻԱԿ).
«Խելացի կանայք 20%-ից ավելի են...»

Մեր կուսակցությունում կանայք կազմում են մեծամասնություն, ու նրանք բավական ակտիվորեն ներգրավված են ղեկավար մարմիններում (2007-ի ընտրություններում ՄԻԱԿ-ի կուսակցական ցուցակներում ներկայացվել էին ամենաշատ թվով կանայք՝ 44% - **ծնթ. խմբ.**)*:* Տվյալ պահին քվոտաներ ներմուծելը ճիշտ որոշում է, սակայն հավանաբար չարժի ամրագրել 20%-անոց ներկայացվածություն, չէ՞ որ մեզանում խելացի կանայք, ովքեր կարող են լուրջ ներդրում ունենալ Ազգային ժողովի աշխատանքում, հաստատ 20%-ից ավելի շատ են: Ինչ վերաբերում է «առնվազն յուրաքանչյուր տասներորդը» սկզբունքին, ապա եթե օրինագծի հեղինակների նպատակն է երկրի խորհրդարանում ապահովել ամրագրված քվոտան, ապա նրանց պետք է առաջարկել վերանայել տեղերի բաշխումը:

Տիգրան Կարապետյան,
Ժողովրդական կուսակցություն.
«Նայում եմ մեր խորհրդարանի կանանց և...»

Կինը միշտ պետք է ներգրավված լինի ամեն կարգի գործընթացներում, սակայն, համաձայնեք, եթե նա առաջնորդ չէ և կուսակցական գործերում բավարար փորձ չունի, ապա ի՞նչ իմաստ ունի նրան ներքաշել քաղաքականության մեջ: Մի՞թե միայն այն պատճառով, որ սա օրենքի պահանջն է: Այս իմաստով ես դեմ եմ քվոտաներին ու ամեն կարգի տոկոսների: Ինչ վերաբերում է մեր կուսակցությանը, ապա մեր շարքերում կան ակտիվիստ կանայք, մենք նրանց միշտ ընդգրկել ենք կուսակցական ցուցակներում (2007-ի ընտրություններում՝ 22% կանայք - **ծնթ. խմբ.**), ու այս անգամ էլ կընդգրկենք, խնդիր չի լինի: Սակայն կրկնում եմ, խնդիրն այն չէ, որ գտնենք օրենքի տառին համապատասխան թվով կանայք, այլ այն, որ նրանցից քաղաքական գործիչներ ստեղծենք: Օրինակի համար՝ նայում եմ մեր խորհրդարանի կանանց և, կներեք, բայց նրանց մեծ մասին չի կարելի քաղաքական գործիչ կոչել:

Լևոն Զուբարյան,
Հայ ազգային կոնգրես.
«Ներմուծել քվոտաներ, որ հետո դրանք խախտե՞լ...»

Մենք խնդիրներ չունենք ընտրական ցուցակներում կանանց ներգրավելու, քանի որ մեր շարժման մեջ շատ են ակտիվ կանայք: Ես նույնիսկ կասեի, որ կանայք մեզանում ամենաակտիվն են, չեմ բացառում, որ ընտրական ցուցակներում նրանք կլինեն 20%-ից ավելի: Անձամբ ես կողմ եմ 50-ը 50-ի հարաբերակցության: Ինչ վերաբերում է ընտրական օրենսգրքում քվոտաների ներմուծմանը, ապա ինչ-որ պահանջներ ամրագրելն անիմաստ է, քանի որ իշխանական կուսակցությունները հենց իրենք դրանք կխախտեն: Օրինակ՝ մայրաքաղաքի ավագանու ընտրություններում, որոնք, ինչպես հայտնի է, անցկացվում էին համամասնական ընտրակարգով, ոչ բոլոր կոալիցիոն կուսակցությունների ցուցակներում կանանց ներկայացվածությունը 15% էր: Մենք, ի դեպ, այդ պահանջը կատարեցինք...

Զրուցեցին Լիա Խոջոյանը
Արման Ղարիբյանը

Թողարկումը հրատարակվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան:
Ձևավորումը՝ Վահե Դիոնեսյանի

Տպաքանակը՝ 7000